ԽՈՒՄԲ 9

167 հարց

DT կարգեր · տեսական հարցաշար

1. **Կարմիր գույնի առկայծող փարոսիկ միացրած, կանգնած վիճակում գտնվող տրանսպորտային միջոցին մոտենալիս՝ տվյալ ուղղությամբ երթեւեկող ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վարորդները պետք է**

1. **Կանգ առնեն եւ շարունակեն երթևեկությունը միայն թույլտվություն ստանալուց հետո:**
2. Իջեցնեն արագությունը, որպեսզի անհրաժեշտության դեպքում հնարավորություն ունենան անմիջապես կանգ առնել:
3. Շարունակեն երթեւեկությունը, քանի որ երթևեկում են սահմանված երթուղով:

Պատ.՝ 1

---

2. **Կապույտ գույնի առկայծող փարոսիկ եւ հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոցի մոտենալու դեպքում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վարորդները պետք է**

1. շարունակեն երթևեկությունը, քանի որ երթևեկում են սահմանված երթուղով:
2. **զիջեն ճանապարհը՝ նշված տրանսպորտային միջոցի անխոչընդոտ անցումն ապահովելու համար:**
3. իջեցնեն արագությունը եւ զիջեն ճանապարհը՝ նշված տրանսպորտային միջոցի անխոչընդոտ անցումն ապահովելու համար:

Պատ.՝ 2

---

3. **Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ձայնային ազդանշանները կարող են կիրառվել՝**

1. Երթևեկության մյուս մասնակիցների նկատմամբ առավելություն ստանալու համար:
2. Բնակավայրերում՝ վազանց կատարելու մտադրության մասին մյուս վարորդներին նախազգուշացնելու համար:
3. **Երբ դա անհրաժեշտ է ճանապարհատրանսպորտային պատահարը կանխելու համար:**
4. Բոլոր դեպքերում էլ:

Պատ.՝ 3

---

4. **Օրվա մութ ժամանակ ճանապարհի չլուսավորված հատվածներում սահմանված երթուղով երթևեկող ավտոբուսի վրա պետք է միացված լինի**

1. Լապտերների միայն մոտակա լույսը:
2. Լապտերների միայն հեռահար լույսը:
3. **Լապտերների հեռահար կամ մոտակա լույսը:**

Պատ.՝ 3

---

5. **Պարտադի՞ր է արդյոք օրվա լուսավոր ժամերին լապտերների մոտակա լույսը միացված լինի հատուկ առանձնացված գոտիով, հիմնական հոսքին հանդիպակաց երթևեկող ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա:**

1. **Պարտադիր է**
2. Պարտադիր չէ

Պատ.՝ 1

---

6. Ո՞ր դեպքում կանոնները չեն պարտադրում տալ նախազգուշացնող ազդանշան:

1. Երթեւեկելի մասի եզրին կանգառ կատարելիս
2. «Վտանգավոր շրջադարձ» նշանի ազդեցության ճանապարհի կորացումից առաջ
3. Երթեւեկության հարեւան գոտի վերադասավորվելուց առաջ

Պատ.՝ 2

7. Վերադասավորումից առաջ նախազգուշացնող ազդանշանը պետք է տրվի

1. Անմիջապես մանեւրը սկսելուց առաջ:
2. Անմիջապես մանեւրն սկսելուց հետո:
3. Նախօրոք՝ մինչեւ մանեւրը սկսելը:

Պատ.՝ 3

8. Մանեւր կատարելիս նախազգուշացնող ազդանշանը պետք է տրվի

1. Երթևեկության ուղղությունը փոխելուց առաջ:
2. Երթևեկության ուղղությունը փոխելու ընթացքում:
3. Նախօրոք՝ մինչեւ երթևեկության ուղղություն փոխելը:

Պատ.՝ 3

9. Ո՞ր դեպքում վարորդը պետք է տա նախազգուշացնող ազդանշան՝ կանգառ կատարելուց առաջ:

1. Եթե նրա հետեւից երթեւեկում է այլ տրանսպորտային միջոց
2. Միայն բնակավայրերում
3. Բոլոր դեպքերում

Պատ.՝ 3

10. Ձայնային ազդանշանների կրկնողությամբ ընդհանուր տագնապի ինչպիսի՞ ազդանշան է վարորդը պարտավոր տալ երկաթուղային գծանցի վրա հարկադրական կանգառ կատարելու դեպքում:

1. Երեք երկար եւ մեկ կարճ
2. Մեկ երկար եւ երեք կարճ
3. Մեկ երկար եւ երկու կարճ

Պատ.՝ 2

11. Շրջադարձի լուսային ցուցիչի բացակայության կամ անսարքության դեպքում ձեռքով տրվող նախազգուշացնող ազդանշանը դադարեցվում է

1. Մանեւրն սկսելուց անմիջապես առաջ:
2. Մանեւրն ավարտելուց անմիջապես հետո:
3. Մանեւրը կատարելու ժամանակ:

Պատ.՝ 1


12. **Երկաթուղային գծանցի վրա տրվող ընդհանուր տագնապի ազդանշան է հանդիսանում ձայնային ազդանշանների հետեւյալ համակցությունը՝**

1. Երկու երկար եւ երկու կարճ:
2. **Մեկ երկար եւ երեք կարճ:**
3. Երեք երկար եւ երեք կարճ:
4. Երեք երկար եւ մեկ կարճ:

Պատ.՝ 2

---

13. **Ո՞ր նկարում է վարորդը տալիս ձախ շրջադարձի ազդանշան:**



1. 1
2. 2
3. 3

Պատ.՝ 1

---

14. **Կարմիր գույնի առկայծող փարոսիկ միացրած, կանգնած վիճակում գտնվող տրանսպորտային միջոցին մոտենալիս՝ տվյալ ուղղությամբ երթեւեկող տրանսպորտային միջոցների վարորդները պետք է**

1. **Կանգ առնեն եւ շարունակեն երթեւեկությունը միայն թույլտվություն ստանալուց հետո:**
2. Իջեցնեն արագությունը, որպեսզի անհրաժեշտության դեպքում հնարավորություն ունենան անմիջապես կանգ առնել:

Պատ.՝ 1

---

15. **Տրանսպորտային միջոցների վրա ի՞նչ նպատակով են տեղադրված նարնջագույն կամ դեղին գույնի առկայծող փարոսիկներ:**

1. Երթեւեկության մյուս մասնակիցների նկատմամբ երթեւեկության առավելություն ստանալու համար
2. **Երթեւեկության մյուս մասնակիցներին վտանգի մասին նախազգուշացնելու համար**

Պատ.՝ 2

---


16. **Կապույտ գույնի առկայծող փարոսիկ եւ հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոց մոտենալու դեպքում վարորդները պետք է**

1. **Չիջեն ճանապարհը՝ նշված տրանսպորտային միջոցի անխոչընդոտ անցումն ապահովելու համար:**
2. Իջեցնեն արագությունը եւ զիջեն ճանապարհը՝ նշված տրանսպորտային միջոցի անխոչընդոտ անցումն ապահովելու համար:

Պատ.՝ 1

---

17. **Կապույտ ավտոմոբիլը խաչմերուկը կանցնի**



1. Առաջինը՝ կարմիրի հետ միաժամանակ:
2. Երկրորդը՝ կարմիրի հետ միաժամանակ:
3. **Երրորդը՝ կարմիրի հետ միաժամանակ:**

Պատ.՝ 3

---

18. **Կապույտ եւ կարմիր գույների առկայծող փարոսիկներ եւ հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոց մոտենալու դեպքում վարորդները պետք է**

1. Չիջեն ճանապարհը՝ նշված տրանսպորտային միջոցի անխոչընդոտ անցումն ապահովելու համար:
2. **Իջեցնեն արագությունը եւ զիջեն ճանապարհը՝ նշված, ինչպես նաեւ դրանով ուղեկցվող տրանսպորտային միջոցների անխոչընդոտ անցումն ապահովելու համար:**

Պատ.՝ 2

---

19. **Տալի՞ս է արդյոք երթեւեկության առավելություն տրանսպորտային միջոցի վրա միացված դեղին գույնի (նարնջագույն) առկայծող փարոսիկը:**

1. Տալիս է
2. **Չի տալիս**

Պատ.՝ 2

---

20. **Լուսնասպիտակ գույնի առկայծող փարոսիկները միացրած տրանսպորտային միջոցի վարորդը տալիս է հատուկ ձայնային ազդանշան, որպեսզի**

1. Ստանա երթեւեկության առավելություն երթեւեկության այլ մասնակիցների նկատմամբ:
2. **Ոստիկանության ծառայողների եւ այլ անձանց ուշադրությունը գրավելու համար:**

Պատ.՝ 2

21. **Կապույտ գույնի առկայծող փարոսիկով կահավորված տրանսպորտային միջոցի վարորդը երթեւեկության մյուս մասնակիցների նկատմամբ առավելություն ունի, եթե**

1. Միացրել է առկայծող փարոսիկը:
2. Հատուկ ձայնային ազդանշան է տալիս:
3. **Միացրել է կապույտ գույնի առկայծող փարոսիկը եւ հատուկ ձայնային ազդանշանը:**

Պատ.՝ 3

---

22. **Ի՞նչ տարածության վրա է արգելվում վազանցը մինչեւ երկաթուղային գծանցը:**

1. Մինչեւ 50մ գծանցից առաջ:
2. **Մինչեւ 100մ գծանցից առաջ:**
3. Մինչեւ 150մ գծանցից առաջ:

Պատ.՝ 2

---

23. **Թույլատրվու՞մ է արդյոք խաչմերուկում կատարել տրանսպորտային միջոցների վազանց՝ հատվողի նկատմամբ գլխավոր համարվող ճանապարհի վրա:**

1. Թույլատրվում է
2. **Արգելվում է**

Պատ.՝ 2

---

24. **Վազանցն արգելվում է**

1. **Խաչմերուկներում:**
2. Երկաթուղային գծանցներից 150 մ առաջ:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

---


25. **Վազանցն արգելվում է**

1. Կարգավորվող խաչմերուկներում:
2. Չկարգավորվող խաչմերուկներում:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

---

26. **Թույլատրվու՞մ է արդյոք նշված տեղում վազանցել ավտոբուսը:**



1. **Թույլատրվում է**
2. Արգելվում է

Պատ.՝ 1

---

27. **Տրանսպորտային միջոցների վազանց նշանակում է**

1. Շարժման մեջ գտնվող մեկ կամ մի քանի տրանսպորտային միջոցից առաջ անցնելը՝ կապված զբաղեցրած գոտուց հանդիպակաց երթեւեկության գոտի դուրս գալու հետ:
2. **Շարժման մեջ գտնվող մեկ կամ մի քանի տրանսպորտային միջոցից առաջ անցնելը՝ կապված զբաղեցրած գոտուց դուրս գալու հետ:**

Պատ.՝ 2

---

28. **Օրվա մութ ժամանակ եւ անբավարար տեսանելիության պայմաններում՝ անկախ ճանապարհի լուսավորվածությունից, երթեւեկող մեխանիկական տրանսպորտային միջոցների վրա պետք է միացված լինեն**

1. Լապտերների հեռահար լույսը:
2. Լապտերների մոտակա լույսը:
3. **Լապտերների հեռահար կամ մոտակա լույսը:**

Պատ.՝ 3

---

29. **Ի՞նչ պետք է ձեռնարկի վարորդը հանդիպակաց երթեւեկող տրանսպորտային միջոցի լապտերների լույսից շլանալու դեպքում:**

1. Լապտերների հեռահար լույսը (միացված լինելու դեպքում) փոխարկի մոտակայի
2. **Միացնի վթարային լուսային ազդանշանը և, չփոխելով երթևեկության գոտին, իջեցնի արագությունը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ կանգ առնի**
3. Տա ձայնային ազդանշան՝ մեկ երկար եւ երեք կարճ
4. Տա ձայնային ազդանշան՝ մեկ կարճ եւ երեք երկար

Պատ.՝ 2

---

30. **Ձայնային ազդանշանները կարող են կիրառվել միայն**

1. Բնակավայրերում՝ վազանց կատարելու մտադրության մասին մյուս վարորդներին նախազգուշացնելու համար:
2. **Երբ դա անհրաժեշտ է ճանապարհատրանսպորտային պատահարը կանխելու համար**
3. Երկու դեպքում էլ

Պատ.՝ 2

---

31. **Օրվա մութ ժամանակ ճանապարհի չլուսավորված հատվածներում երթեւեկող մեխանիկական տրանսպորտային միջոցի վրա պետք է միացված լինի**

1. **Լապտերների հեռահար կամ մոտակա լույսը:**
2. Լապտերների միայն մոտակա լույսը:
3. Լապտերների միայն հեռահար լույսը:

Պատ.՝ 1

---

32. **Չետին հակամառախուղային լապտերիկները կարող են օգտագործվել**

1. Օրվա մութ ժամանակ՝ տրանսպորտային շարասյան կազմում երթեւեկելիս:
2. Թունելներում երթեւեկելիս:
3. **Միայն անբավարար տեսանելիության պայմաններում:**
4. Օրվա մութ ժամանակ՝ տրանսպորտային միջոցը բեռնաթափելիս:
5. Թվարկած բոլոր դեպքերում:

Պատ.՝ 3

---

33. **Հանդիպակաց երթեւեկող տրանսպորտային միջոցից ի՞նչ հեռավորության վրա լապտերների հեռահար լույսը պետք է փոխարկվի մոտակայի:**

1. 100 մ-ից ոչ պակաս
2. **150 մ-ից ոչ պակաս**
3. 300 մ-ից ոչ պակաս

Պատ.՝ 2

---

34. **Այս նախազգուշացնող նշանը բնակավայրերում, մինչեւ վտանգավոր հատվածի սկիզբը ի՞նչ հեռավորության վրա է տեղադրվում:**



1. 25 - 50մ
2. **50 - 100մ**
3. 100 - 150մ

Պատ.՝ 2

---

35. **Որտե՞ղ է թույլատրվում հատել երկաթուղային գծերը:**

1. Այն տեղերում, որտեղ երկու կողմից տեսանելիությունը կազմում է առնվազն 1000մ
2. Վարորդի հայեցողությամբ՝ դրա համար առավել հարմարավետ տեղերում
3. **Դրա համար նախատեսված տեղերում՝ միայն երկաթուղային գծանցներով**
4. Երկաթուղային կայարաններից առնվազն 1000մ հեռավորության վրա

Պատ.՝ 3

---

36. **Ինչո՞վ պետք է ղեկավարվի վարորդը երկաթուղային գծանցին մոտենալիս:**

1. Ուղեփակոցի դիրքով եւ լուսացույցի ազդանշաններով
2. Ճանապարհային նշանների եւ գծանշումների պահանջներով
3. Գծանցի հերթապահի ցուցումներով
4. **Բոլոր թվարկած պահանջներով**

Պատ.՝ 4

---

37. **Թույլատրվու՞մ է արդյոք հետիոտներին տեղաշարժվել «Ավտոմայրուղի» նշանով կահավորված ճանապարհով:**

1. **Արգելվում է**
2. Թույլատրվում է՝ բնակավայրերից դուրս՝ տրանսպորտային միջոցների հոսքին հակառակ
3. Թույլատրվում է՝ բնակավայրերից դուրս՝ տրանսպորտային միջոցների հոսքին համընթաց

Պատ.՝ 1

---

38. **Տրանսպորտային միջոցներով, որոնց արագությունը, տեխնիկական բնութագրերից կամ վիճակից ելնելով, չի գերազանցում 40 կմ/ժ, ավտոմայրուղիներով երթեւեկել**

1. Թույլատրվում է՝ միայն աջ եզրային գոտիով:
2. **Արգելվում է:**
3. Թույլատրվում է՝ «Նվազագույն արագության սահմանափակում» նշանի բացակայության դեպքում:

Պատ.՝ 2

---

39. **Տրանսպորտային միջոցի վրա վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի**

1. Ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում:
2. Կանգառն արգելված տեղերում՝ հարկադրված կանգառի դեպքում:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

---

40. **Տրանսպորտային միջոցի վրա վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի**

1. Ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում:
2. Քարշակման դեպքում (քարշակվող մեխանիկական տրանսպորտային միջոցի վրա):
3. Կանգառն արգելված տեղերում՝ հարկադրված կանգառի դեպքում:
4. **Թվարկած բոլոր դեպքերում:**

Պատ.՝ 4

---

41. **Տրանսպորտային միջոցից ի՞նչ հեռավորության վրա է տեղադրվում «Վթարային կանգառ» նշանը:**

1. **Բնակավայրերում՝ ոչ պակաս, քան 15մ վրա, բնակավայրերից դուրս՝ ոչ պակաս, քան 30մ**
2. Բնակավայրերում՝ ոչ պակաս, քան 10 մ վրա, բնակավայրերից դուրս՝ ոչ պակաս, քան 20մ
3. Բնակավայրերում՝ ոչ պակաս, քան 5մ վրա, բնակավայրերից դուրս՝ ոչ պակաս, քան 10մ

Պատ.՝ 1

---

42. **Տրանսպորտային միջոցի վրա վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի**

1. Լապտերների լույսից վարորդի շլացման դեպքում:
2. Քարշակման դեպքում (քարշակվող մեխանիկական տրանսպորտային միջոցի վրա):
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

---

43. **Տրանսպորտային միջոցի վրա վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի**

1. Ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում:
2. Քարշակման դեպքում (քարշակվող մեխանիկական տրանսպորտային միջոցի վրա):
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

---

44. **Կառուցապատված տարածքներում, որտեղ մուտքն ու ելքը նշված են «Բնակելի գոտի» եւ «Բնակելի գոտու վերջ» ճանապարհային նշաններով, չի արգելվում**

1. **Հետիոտների տեղաշարժը՝ ճանապարհի երթեւեկելի մասով:**
2. Տրանսպորտային միջոցների միջանցիկ երթեւեկությունը:
3. Ուսումնական վարումը:

Պատ.՝ 1

---

45. **Խաչմերուկը համարվում է կարգավորվող, եթե երթեւեկության հերթականությունը որոշվում է**

1. Միայն լուսացույցի ազդանշաններով:
2. Միայն կարգավորողի ազդանշաններով:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

---


46. **Առանց ծածկույթի հողային ճանապարհի վրա, անմիջապես խաչմերուկից առաջ, ծածկույթով հատվածի առկայությունն արդյոք այդ ճանապարհը դարձնու՞մ է հատվողին հավասարազոր:**

1. **Ոչ**
2. Այո

Պատ.՝ 1

---

47. **Ո՞ր նկարում են պատկերված երթեւեկության թույլատրելի ուղղությունները:**



1. Ձախ նկարում
2. Մեջտեղի նկարում
3. **Աջ նկարում**
4. Մեջտեղի եւ աջ նկարներում

Պատ.՝ 3

---

48. **Եթե լուսացույցի ազդանշանների նշանակությունները հակասում են առավելության նշանների պահանջներին, ապա վարորդները պետք է ղեկավարվեն**

1. Նշանների պահանջներով:
2. **Լուսացույցի ազդանշաններով:**

Պատ.՝ 2

---

49. **Թույլատրվու՞մ է արդյոք վարորդին շարունակել երթեւեկությունը լուսացույցի դեղին ազդանշանը միանալու կամ կարգավորողի ձեռքը բարձրացնելու դեպքում:**

1. Արգելվում է
2. **Թույլատրվում է, եթե վարորդը չի կարող կանգնել՝ առանց կտրուկ արգելակման**

Պատ.՝ 2

---

50. **Կարգավորողն ազդանշան տալիս է սուլիչով**

1. Միայն այն դեպքում, երբ պահանջում է կանգնեցնել տրանսպորտային միջոցը:
2. **Երթեւեկության մասնակիցների ուշադրությունն իր վրա հրավիրելու համար:**

Պատ.՝ 2

---

51. **Ո՞ր դեպքում կանոնները չեն պարտադրում ավտոբուսի վարորդին տալ նախազգուշացնող ազդանշան:**

1. Երթևեկելի մասի եզրին կանգառ կատարելիս:
2. **«Վտանգավոր շրջադարձ» նշանով կահավորված ճանապարհատվածի կորացումից առաջ:**
3. Երթևեկության հարևան գոտի վերադասավորվելուց առաջ:

Պատ.՝ 2

---

52. **Վերադասավորումից առաջ ավտոբուսի վարորդը նախազգուշացնող ազդանշան պետք է տա՝**

1. Անմիջապես մանևրը սկսելուց առաջ:
2. Անմիջապես մանևրը սկսելուց հետո:
3. **Նախօրոք՝ մինչև մանևրը սկսելը:**
4. Պարտավոր չէ, եթե ավտոբուսը երթևեկում է սահմանված երթուղով:

Պատ.՝ 3

---

53. **Ձայնային ազդանշանների կրկնողությամբ ընդհանուր տագնապի ինչպիսի՞ ազդանշան է ավտոբուսի վարորդը պարտավոր տալ երկաթուղային գծանցի վրա հարկադրական կանգառ կատարելու դեպքում:**

1. Երեք երկար և մեկ կարճ:
2. **Մեկ երկար և երեք կարճ:**
3. Մեկ երկար և երկու կարճ:
4. Երկու երկար և երկու կարճ:

Պատ.՝ 2

---

54. **Միջքաղաքային ավտոբուսի վարորդն իրավունք ունի՞ վազանցելու մոտոցիկլին, որը երթևեկում է 70 կմ/ժ արագությամբ:**




1. **Իրավունք չունի:**
2. Իրավունք ունի:

Պատ.՝ 1

---

55. **Կարելի՞ է նշված հետագծով երթեւեկելու համար ձեռքով տալ նախազգուշացնող ազդանշան:**



1. **Կարելի է, եթե անսարք է շրջադարձի ցուցիչը**
2. Կարելի, եթե անսարք է շրջադարձի ցուցիչը՝ օրվա լուսավոր ժամերին
3. Կարելի է բոլոր դեպքերում

Պատ.՝ 1

---

56. **Պարտավո՞ր է վարորդը միացնել շրջադարձի ցուցիչը՝ բնակելի գոտում երթեւեկությունը սկսելուց առաջ:**

1. Պարտավոր չէ
2. **Պարտավոր է**
3. Պարտավոր է, այլ տրանսպորտային միջոցների առկայության դեպքում

Պատ.՝ 2

---

57. **Պարեկային ծառայության ավտոմոբիլի վարորդը երթեւեկության այլ մասնակիցների նկատմամբ առավելություն ստանալու համար պետք է միացնի**

1. Կապույտ գույնի առկայծող փարոսիկը:
2. Կապույտ եւ կարմիր գույնի առկայծող փարոսիկները:
3. **Կապույտ գույնի առկայծող փարոսիկը եւ հատուկ ձայնային ազդանշանը:**

Պատ.՝ 3

---

58. **Պարտավո՞ր է ավտոբուսի վարորդը ճանապարհը զիջել «Շտապ օգնության» ավտոմոբիլին, եթե միացրած չեն կապույտ գույնի առկայծող փարոսիկը եւ հատուկ ձայնային ազդանշանը:**



1. Պարտավոր է:
2. **Պարտավոր չէ:**

Պատ.՝ 2

---

59. **Վազանցն արգելվում է՝**

1. **Երկաթուղային գծանցների վրա եւ մինչեւ 100մ դրանցից առաջ:**
2. Երկաթուղային գծանցների վրա և մինչև 150մ դրանցից առաջ:
3. Երկաթուղային գծանցների վրա և մինչև 250մ դրանցից առաջ:

Պատ.՝ 1

---

60. **Ինչի՞ մասին է տեղեկացնում թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդի կողմից ձեռքով տրված ազդանշանը:**



1. Շրջադարձ է կատարում դեպի աջ
2. Շարունակում է երթեւեկությունն ուղիղ
3. **Արգելակում է**

Պատ.՝ 3

---

61. **Վթարային լուսային ազդանշանը միացվում է**

1. Մինչեւ թունել մտնելը:
2. **Ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում:**
3. Կազմակերպված ավտոշարասյան կազմում երթեւեկելիս:

Պատ.՝ 2

---

62. **Ինչի՞ մասին է տեղեկացնում մոտոցիկլի վարորդի կողմից ձեռքով տրված ազդանշանը:**



1. **Շարունակում է երթեւեկությունը ձախ կամ հակառակ ուղղությամբ**
2. Շարունակում է երթեւեկությունն ուղիղ կամ աջ ուղղությամբ

Պատ.՝ 1

---

63. **Ինչի՞ մասին է տեղեկացնում թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդի կողմից ձեռքով տրված ազդանշանը:**



1. **Աջ շրջադարձ է կատարում**
2. Շարունակում է երթեւեկությունն ուղիղ
3. Արգելակում է՝ ճանապարհը մոտոցիկլին զիջելու համար

Պատ.՝ 1

---

64. **Ինչի՞ մասին է տեղեկացնում թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդի կողմից ձեռքով տրված ազդանշանը:**



1. **Մտադիր է կատարել ձախ շրջադարձ կամ հետադարձ**
2. Արգելակում է՝ ճանապարհը բեռնատար ավտոմոբիլին զիջելու համար

Պատ.՝ 1

---

65. **Պարտավո՞ր է արդյոք վարորդը միացնել շրջադարձի ցուցիչը տվյալ դեպքում:**



1. **Պարտավոր է**
2. Պարտավոր չէ

Պատ.՝ 1

---

66. **Օրվա լուսավոր ժամերին երեխաների կազմակերպված խմբեր տեղափոխելու ժամանակ պետք է միացված լինեն ավտոբուսի՝**

1. Լապտերների հեռահար լույսերը:
2. **Լապտերների մոտակա լույսերը:**
3. Վթարային լուսային ազդանշանը:
4. Սրահի ներքին լուսավորության սարքերը:

Պատ.՝ 2

---

67. Թույլատրվու՞մ է արդյոք մուտք գործել երկաթուղային գծանց տվյալ իրավիճակում:



1. Թույլատրվում է
2. Արգելվում է

Պատ.՝ 2

68. Թույլատրվու՞մ է արդյոք մուտք գործել երկաթուղային գծանց տվյալ իրավիճակում:



1. Թույլատրվում է, եթե գնացք չի մոտենում
2. Թույլատրվում է, եթե ուղեփակոցը բաց է
3. Արգելվում է

Պատ.՝ 3

69. Ինչպե՞ս պետք է գործել տվյալ իրադրությունում:



1. Գնացքի բացակայության դեպքում շրջանցել ուղեփակոցը եւ շարունակել երթեւեկությունը
2. **Կանգ առնել եւ սպասել ուղեփակոցի բացմանը**

Պատ.՝ 2

---

70. Տվյալ իրավիճակում թույլատրվու՞մ է անցնել երկաթուղային գծանցը:



1. Թույլատրվում է, եթե գնացք չի մոտենում
2. Թույլատրվում է
3. **Արգելվում է**

Պատ.՝ 3

---

71. Տվյալ իրավիճակում թույլատրվու՞մ է անցնել երկաթուղային գծանցը:



1. Արգելվում է
2. Թույլատրվում է, եթե մոտեցող գնացք չկա
3. Թույլատրվում է, քանի որ գծանցի հերթապահն արգելում է հանդիպակաց տրանսպորտային միջոցի անցումը

Պատ.՝ 1

---

72. Տվյալ իրավիճակում որտե՞ղ կարելի է սկսել վազանցը:



1. Երկաթուղային գծանցում
2. Երկաթուղային գծանցն անցնելուց հետո
3. Երկաթուղային գծանցից 100մ անցնելուց հետո

Պատ.՝ 2

---

73. **Տվյալ իրավիճակում թույլատրվու՞մ է վազանց կատարել:**



1. Թույլատրվում է, քանի որ հանդիպակաց երթեւեկող տրանսպորտային միջոց չկա
2. Արգելվում է
3. Թույլատրվում է, եթե լծասայլը շարժվում է 30 կմ/ժ-ից ցածր արագությամբ

Պատ.՝ 2

---

74. **Թույլատրվում է արդյո՞ք վազանցել մոտոցիկլին:**



1. Թույլատրվում է
2. Արգելվում է

Պատ.՝ 2

---

75. **Ո՞ր դեպքում է թույլատրվում հանդիպակաց երթևեկության գոտիով վազանց կատարել յուրաքանչյուր ուղղությամբ մեկ գոտի ունեցող ճանապարհներին:**

1. Միայն, երբ հանդիպակաց ուղղությամբ գոտին բավարար տարածությամբ ազատ է
2. Միայն, երբ մեզ վազանց չեն կատարում
3. Երկու պայմաններն էլ պետք է ապահովված լինեն

Պատ.՝ 3

---

76. **Թույլատրվում է արդյո՞ք վազանց կատարել նշված իրավիճակում:**



1. Արգելվում է
2. Թույլատրվում է, եթե մանևրը կավարտվի տեսանելիության սահմաններում
3. **Թույլատրվում է**

Պատ.՝ 3

---

77. **Թույլատրվո՞ւմ է վազանցել բեռնատարին:**



1. Այո
2. **Այո, եթե վազանցը մինչև խաչմերուկ կավարտվի**
3. Ոչ

Պատ.՝ 2

---

78. **Ի՞նչ է պահանջվում վազանցվող տրանսպորտային միջոցի վարորդից:**

1. Նա պարտավոր է զիջել ճանապարհը վազանց կատարողին
2. **Նա որևէ կերպ չպետք է խոչընդոտի վազանցողին՝ բարձրացնելով արագությունը կամ կատարելով այլ գործողություն**

Պատ.՝ 2

---

79. Թույլատրվո՞ւմ է այս իրավիճակում վազանց կատարել:



1. Արգելվում է
2. Թույլատրվում է, եթե բեռնատարի արագությունը 30 կմ/ժ-ից պակաս է
3. Թույլատրվում է

Պատ.՝ 1

---

80. Հետիոտնային անցման վրա վազանցն

1. արգելվում է միայն հետիոտնի առկայության դեպքում:
2. արգելվում է:
3. թույլատրվում է:

Պատ.՝ 2

---

81. Ի՞նչ է ցույց տալիս ճանապարհային նշանը:



1. 500 մետր հետո տապալված ծառ կա
2. 500 մետր հետո հանգստի վայր է
3. 500 մետր հատվածում հանգստի վայր է

Պատ.՝ 2

---

82. Այս իրավիճակում շրջադարձի լուսային ցուցիչ վարորդը միացնել




1. պարտավոր է:
2. պարտավոր է, եթե հետևից մոտեցող տրանսպորտային միջոց կա:
3. **պարտավոր չէ:**

Պատ.՝ 3

---

83. Վարորդը դեպի վեր պարզած ձեռքով տեղեկացնում է



1. ձախ շրջադարձ կատարելու մասին:
2. ուղիղ երթևեկելու մասին:
3. **ընթացքը դանդաղեցնելու մասին:**

Պատ.՝ 3

---

84. Ազդանշան տալը երթևեկության մյուս մասնակիցների նկատմամբ առավելություն

1. տալիս է:
2. **չի տալիս:**
3. տալիս է միայն շարժում սկսելիս:

Պատ.՝ 2

---

85. Գլխավոր ճանապարհով աջ շրջադարձ կատարելիս ազդանշան տալը



1. պարտադիր է:
2. պարտադիր է, միայն օրվա մութ ժամանակ:
3. պարտադիր չէ:

Պատ.՝ 1

86. Ի՞նչի մասին է տեղեկացնում մոտոցիկլի վարորդը:



1. Երթևեկությունը ուղիղ շարունակելու
2. Ձախ շրջադարձ կատարելու
3. Թեթև մարդատարին զիջելու նպատակով արագությունն իջեցնելու

Պատ.՝ 3

87. Ձախ շրջադարձ կատարելիս այս իրավիճակում ազդանշան տալը



1. պարտադիր է:
2. պարտադիր չէ:

Պատ.՝ 1

88. Հետադարձն այս խաչմերուկում կատարելիս ո՞ր շրջադարձի ցուցիչը պետք է միացնենք:



1. Աջ
2. Ձախ
3. Ոչ մեկը

Պատ.՝ 1

89. Պարտավոր եք արդյո՞ք նշված իրադրությունում տալ ազդանշան լուսային ցուցիչով:



1. Այո
2. Ոչ
3. Այո, եթե աջ գոտով երթևեկող վարորդ կա:

Պատ.՝ 1

90. Ի՞նչի մասին է տեղեկացնում մոտոցիկլի վարորդը:



1. Երթևեկությունն ուղիղ շարունակելու
2. Աջ շրջադարձ կատարելու
3. Ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելու

Պատ.՝ 3

91. Լուսային ցուցիչով տրված մանևրի մասին ազդանշանը պետք է դադարեցվի

1. Անմիջապես մանևրից առաջ:
2. **Անմիջապես մանևրից հետո:**
3. Մանևրի ընթացքում:

Պատ.՝ 2

---

92. Լուսային ցուցիչով ազդանշան տալ նշված իրավիճակում



1. **պարտադիր է:**
2. ըստ վարորդի հայեցողության:

Պատ.՝ 1

---

93. Ո՞ր վարորդն է աջ շրջադարձի ազդանշան տալիս:



1. Միայն աջում գտնվողը
2. **Երկու վարորդներն էլ**
3. Միայն ձախում գտնվողը

Պատ.՝ 2

---

94. Կայանատեղիներում կամ ավտոլցակայաններում մանևրելիս ազդանշան տալ լուսային ցուցիչով

1. **պարտավոր եք:**
2. պարտավոր չեք:

Պատ.՝ 1

---

95. Այս իրավիճակում ի՞նչ կարող է նշանակել վարորդի դուրս պարզած ձեռքը:



1. **Նրա կողմից երթևեկությունը սկսելու վերաբերյալ նշան**
2. Կանգնելու մասին նշան
3. Ընդհանուր տագնապի ազդանշան

Պատ.՝ 1

---

96. Ի՞նչ ազդանշաններ պետք է տաք նշված հետագծով հետադարձը կատարելիս:



1. Աջ
2. Ձախ
3. **Նախ՝ աջ, ապա՝ ձախ:**

Պատ.՝ 3

---

97. Եթե անմիջապես խաչմերուկից հետո մտադրվել եք կանգառ կատարել, ապա երթևեկության մասնակիցներին շփոթության մեջ չգցելու համար ե՞րբ պետք է միացնեք աջ շրջադարձի լուսային ցուցիչը:



1. Նախապես՝ մինչև խաչմերուկը
2. **Խաչմերուկ մուտք գործելուց հետո**

Պատ.՝ 2

---

98. Մերձակա տարածքից դուրս եկող հատուկ ձայնային և լուսային ազդանշաններ միացրած վարորդին զիջել




1. պարտավոր չենք:
2. պարտավոր ենք:

Պատ.՝ 2

---

99. Խաչմերուկն ուղիղ անցնելիս պարտավո՞ր ենք արդյոք զիջել ճանապարհը միացված դեղին առկայծող փարոսիկներով բեռնատարի վարորդին:



1. Այո
2. Ոչ

Պատ.՝ 2

---

100. Այս իրադրությունում




1. խաչմերուկը կանցնեք առաջինը:
2. պետք է զիջեք ճանապարհը ձախից մոտեցող վարորդին:

Պատ.՝ 2

---

101. Չիջել պարտավոր ենք




1. բոլորին:
2. **ոստիկանության ավտոմոբիլի վարորդին:**
3. ոչ ոքի:

Պատ.՝ 2

---

102. Ձախ շրջադարձ կատարելիս



1. խաչմերուկն առաջինը կանցնեք:
2. կզիջեք միայն ոստիկանության ավտոմոբիլի վարորդին;
3. **կզիջեք բոլոր վարորդներին:**

Պատ.՝ 3

---

103. Ո՞ր դեպքերում է ավտոբուսի վարորդը պարտավոր միացնել վթարային լուսային ազդանշանը:

1. Երեխաների խմբերի կազմակերպված փոխադրման ժամանակ՝ նրանց նստեցնելիս և իջեցնելիս
2. Ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում
3. Բնակավայրից դուրս երթևեկելիս՝ երեխաների խմբեր փոխադրելիս
4. **1 և 2 դեպքերում**
5. 2 և 3 դեպքերում

Պատ.՝ 4

---

104. Ո՞ր դեպքում է ավտոբուսի վարորդը պարտավոր միացնել վթարային լուսային ազդանշանը:

1. Երթուղային տրանսպորտային միջոցների համար հատուկ առանձնացված գոտիով՝ տրանսպորտային միջոցների ընդհանուր հոսքին հանդիպակաց երթևեկելիս
2. **Կանգառն արգելված տեղերում՝ հարկադրական կանգառ կատարելիս**
3. Երկու դեպքերում էլ

Պատ.՝ 2

---

105. **Ավտոբուսի վարորդը վթարային լուսային ազդանշանը միացնում է, երբ՝**

1. **Վտանգի մասին անհրաժեշտ է նախազգուշացնել երթևեկության մասնակիցներին:**
2. Կատարում է հետընթաց:
3. Երկու դեպքերում էլ:

Պատ.՝ 1

106. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի վարորդին կանգառ կատարել «Կանգառն արգելվում է» նշանի ազդման գոտում՝ միացնելով վթարային լուսային ազդանշանը:**

1. Թույլատրվում է միայն երթուղային ավտոբուսներին՝ ուղևորների նստեցման և իջեցման նպատակով
2. **Թույլատրվում է միայն հարկադրական կանգառի դեպքում**
3. Չի թույլատրվում

Պատ.՝ 2

107. **Կապույտ գույնի առկայծող փարոսիկ և հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոցների վարորդները անհետաձգելի ծառայողական առաջադրանք կատարելիս՝ կարո՞ղ են չպահպանել կարգավորողի ազդանշանների պահանջները:**

1. Այո, կարող են
2. **Ոչ, չեն կարող**

Պատ.՝ 2

108. **Կապույտ գույնի առկայծող փարոսիկ և հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոցների վարորդները ե՞րբ կարող են օգտվել առավելությունից:**

1. Անմիջապես հատուկ ձայնային ազդանշան միացնելուց հետո՝ անկախ այլ վարորդների գործողություններից
2. **Միայն այն դեպքում, երբ համոզված են, որ իրենց զիջում են ճանապարհը**
3. Միայն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների բացակայության դեպքում

Պատ.՝ 2

109. **Օգտվու՞մ են արդյոք առավելությունից այն տրանսպորտային միջոցները, որոնք պարզապես երթևեկում են կապույտ և կարմիր գույնի առկայծող փարոսիկներ և հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոցի հետևից՝ առանց ուղեկցման**

1. **Ոչ, առավելությունից օգտվում են միայն հատուկ ազդանշանները միացրած տրանսպորտային միջոցների վարորդները և նրանց կողմից ուղեկցվող տրանսպորտային միջոցները:**
2. Այո, բայց միայն այն դեպքում, եթե հետևից ընթացող տրանսպորտային միջոցը միացրել է վթարային լուսային ազդանշանը:
3. Երկու դեպքերում էլ:

Պատ.՝ 1

110. **Դեղին կամ նարնջագույն առկայծող փարոսիկներ միացրած տրանսպորտային միջոցների վարորդները, ապահովելով երթևեկության անվտանգությունը, կարո՞ղ են չպահպանել այս նշանի պահանջը:**



1. Այո՛, կարող են
2. **Ո՛չ, չեն կարող**

Պատ.՝ 2

---

111. **Դեղին կամ նարնջագույն առկայծող փարոսիկները պետք է միացված լինեն այն տրանսպորտային միջոցների վրա, որոնք իրականացնում են՝**

1. ճանապարհների շինարարության, վերանորոգման, պահպանման կամ մաքրման աշխատանքներ:
2. բնակավայրի տարածքում գյուղատնտեսական աշխատանքներ:
3. անսարք, վթարված և այլ տրանսպորտային միջոցների բարձման ու փոխադրման աշխատանքներ:
4. **1 և 3 դեպքերում**
5. 2 և 3 դեպքերում

Պատ.՝ 4

---

112. **Լուսնասպիտակ գույնի առկայծող փարոսիկներով կահավորված տրանսպորտային միջոցների վարորդները կարող են դրանք միացնել**

1. Խաչմերուկներում անցման առավելություն ստանալու նպատակով:
2. **Հատուկ ձայնային ազդանշանի հետ միասին, միայն այդ տրանսպորտային միջոցների վրա հարձակում գործելու դեպքում:**
3. Իրենց հայեցողությամբ՝ ըստ նպատակահարմարության:

Պատ.՝ 2

---

113. **Ի՞նչ է արգելվում անհետաձգելի ծառայողական առաջադրանք կատարող և կապույտ գույնի առկայծող փարոսիկներ և հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոցի վարորդին:**

1. Շրջադարձ կատարել լուսացույցի արգելող ազդանշանի ժամանակ
2. **Մանևր կատարելուց առաջ շրջադարձի համապատասխան լուսային ցուցիչով ազդանշան չտալ**
3. Ընթանալ սահմանված թույլատրելի առավելագույն արագության գերազանցմամբ

Պատ.՝ 2

---

114. **Ի՞նչ է արգելվում անհետաձգելի ծառայողական առաջադրանք կատարող և կապույտ գույնի առկայծող փարոսիկներ և հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոցի վարորդին:**

1. Հատել ճանապարհային գծանշման հորիզոնական հոծ գիծը
2. Երթևեկել միակողմանի ճանապարհով հակառակ ուղղությամբ
3. **Մանևր կատարելուց առաջ չտալ շրջադարձի համապատասխան լուսային ցուցիչով ազդանշան**

Պատ.՝ 3

---

115. **Պարտավո՞ր է ավտոբուսի վարորդը երթևեկությունը սկսելուց առաջ տալ շրջադարձի համապատասխան լուսային ցուցիչով ազդանշան, եթե տվյալ պահին ճանապարհին այլ տրանսպորտային միջոցներ չկան:**

1. **Պարտավոր է**
2. Պարտավոր չէ
3. Պարտավոր չէ, եթե այն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոց է

Պատ.՝ 1

---

116. **Ե՞րբ պետք է ավտոբուսի վարորդը միացնի շրջադարձի լուսային ցուցիչը մանևր կատարելուց առաջ:**

1. Մանևրը սկսելուց անմիջապես առաջ
2. **Նախօրոք՝ մինչև մանևրը սկսելը**
3. Մանևրը սկսելուց 1- 2 վարկյան հետո

Պատ.՝ 2

---

117. **Պարտավո՞ր է ավտոբուսի վարորդը միացնել շրջադարձի լուսային ցուցիչը, եթե նա չի փոխում երթևեկության գոտին, սակայն ճանապարհը տվյալ հատվածում փոխում է իր ուղղությունը:**

1. Պարտավոր է, քանի որ ավտոբուսի երթևեկության ուղղությունը փոխվում է
2. **Պարտավոր չէ**
3. Պարտավոր է միայն այն դեպքում, եթե ճանապարհը թեքվում է 90 աստիճանից ավելի

Պատ.՝ 2

---

118. **Ավտոբուսի վարորդը պարտավո՞ր է հետընթաց կատարելիս միացնել շրջադարձի լուսային ցուցիչ:**

1. Ոչ, քանի որ հետընթացի ժամանակ պարտադիր պետք է միացված լինի վթարային լուսային ազդանշանը:
2. Ոչ, քանի որ հետընթացի լապտերների սպիտակ լույսը բավարար է այլ վարորդներին զգուշացնելու համար:
3. **Այո:**

Պատ.՝ 3

---

119. **Բակերում կամ այլ մերձակա տարածքներում երթևեկության ուղղությունը փոխելիս ավտոբուսի վարորդը պարտավո՞ր է միացնել շրջադարձի լուսային ազդանշանը:**

1. Պարտավոր չէ, քանի որ բակային տարածքները չեն համարվում ընդհանուր օգտագործման ճանապարհներ:
2. Պարտավոր չէ, եթե բակում տվյալ պահին այլ տրանսպորտային միջոցներ չկան:
3. **Պարտավոր է, քանի որ մանևրի կանոնները գործում են բոլոր տեսակի ճանապարհներին և տարածքներում:**

Պատ.՝ 3

---

120. **Ե՞րբ պետք է ավտոբուսի վարորդն անջատի շրջադարձի լուսային ցուցիչով տրվող ազդանշանը՝ վազանց կատարելու նպատակով վերադասավորվելիս:**

1. **Մանևրն ավարտելուց հետո**
2. Վազանցվող տրանսպորտային միջոցին անցնելուց անմիջապես հետո
3. Նախկինում զբաղեցրած գոտի վերադառնալուց հետո

Պատ.՝ 1

---

121. **Ավտոբուսի վարորդին արգելվում է վազանցել**

1. **Կապույտ գույնի առկայծող փարոսիկ և հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոցին:**
2. Կապույտ գույնի առկայծող փարոսիկ միացրած տրանսպորտային միջոցին, նույնիսկ եթե հատուկ ձայնային ազդանշանը միացված չէ:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

---

122. **Ավտոբուսի վարորդին վազանց կատարելն արգելվում է, եթե վազանցվող տրանսպորտային միջոցները**

1. Նարնջագույն կամ դեղին գույնի առկայծող փարոսիկ միացրած տրանսպորտային միջոցներ են:
2. **Կապույտ և կարմիր գույնի առկայծող փարոսիկներ և հատուկ ձայնային ազդանշան միացրած վիճակում տրանսպորտային միջոցներ են կամ ուղեկցվում են այդպիսի տրանսպորտային միջոցներով:**
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 2

---

123. **Ո՞ր դեպքում է ավտոբուսի վարորդին արգելվում կատարել վազանց:**

1. Եթե վազանցվող տրանսպորտային միջոցն ունի հատուկ գունագրաֆիկական երանգավորում
2. **Եթե վազանցն իրականացվում է երկաթուղային գծանցների վրա և մինչև 100մ դրանից առաջ**
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 2

---

124. **Ո՞ր դեպքում է ավտոբուսի վարորդը պարտավոր խոչընդոտ չստեղծել սպիտակ ձեռնափայտով իրենց գործողությունների մասին ազդանշան տվող կույր հետիոտներին:**

1. Միայն հետիոտնային անցումներում
2. **Բոլոր դեպքերում:**

Պատ.՝ 2

---

125. **Ո՞ր դեպքերում է ավտոբուսի վարորդը պարտավոր խոչընդոտ չստեղծել սպիտակ ձեռնափայտով իր գործողությունների մասին ազդանշան տվող կույր հետիոտներին:**

1. **Բոլոր դեպքերում:**
2. Միայն այն վայրերում, որտեղ տեղադրված է <<Կույր հետիոտներ>> լրացուցիչ տեղեկատվության ցուցանակը

Պատ.՝ 1

---

126. **Որտե՞ղ է թույլատրվում ավտոբուսին հատել երկաթուղային գծերը:**

1. Ցանկացած հատվածում, որտեղ երկաթգծի ռելսերը չեն խոչընդոտում ավտոբուսի շարժմանը և տեսանելիության սահմաններում գնացք չկա
2. **Միայն երկաթուղային գծանցներով՝ ճանապարհը զիջելով գնացքին**

Պատ.՝ 2

---

127. **Ո՞ր դեպքում է երկաթուղային գծանցի հերթապահի ազդանշանը համարվում արգելող:**

1. Երբ հերթապահը կանգնում է դեմքով դեպի վարորդը և ձեռքով տալիս է կանգ առնելու նշան
2. **Երբ հերթապահը կանգնած է դեպի վարորդը կրծքով կամ մեջքով՝ ձեռքերը կողմ պարզած կամ վեր բարձրացրած ցուցանողով, կարմիր լապտերով կամ դրոշակով**

Պատ.՝ 2

---

128. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի վարորդին մուտք գործել գծանց, եթե ուղեփակոցը սկսել է փակվել, բայց լուսացույցը արգելող ազդանշանը դեռ չի միացել:**

1. Թույլատրվում է, եթե տեսանելիության սահմաններում մոտեցող գնացք չկա
2. **Արգելվում է**
3. Թույլատրվում է միայն երթուղային ավտոբուսներին

Պատ.՝ 2

---

129. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի վարորդին մուտք գործել գծանց, եթե լուսացույցի կարմիր ազդանշանը թարթում է, բայց ուղեփակոցը դեռ բաց է:**

1. Թույլատրվում է, եթե տեսանելիության սահմաններում մոտեցող գնացք չկա
2. Թույլատրվում է, քանի դեռ ուղեփակոցը չի սկսել իջնել
3. **Արգելվում է**

Պատ.՝ 3

---

130. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի վարորդին մուտք գործել գծանց, եթե դրանից հետո առաջացել է խցանում:**

1. Թույլատրվում է միայն երթուղային ավտոբուսներին
2. **Արգելվում է, եթե դա վարորդին կհարկադրի կանգ առնել գծանցի վրա**
3. Թույլատրվում է, եթե վարորդը համոզված է, որ կհասցնի ազատել գծանցը մինչև գնացքի մոտենալը

Պատ.՝ 2

---

131. Ավտոբուսի վարորդին թույլատրվու՞մ է շրջանցել գծանցից առաջ կանգնած տրանսպորտային միջոցները, եթե այդ ընթացքում վարորդը դուրս չի գալիս հանդիպակաց երթևեկության գոտի:

1. **Թույլատրվում է**
2. Արգելվում է

Պատ.՝ 1

---

132. Թույլատրվու՞մ է քարշակող ավտոբուսով անցնել երկաթուղային գծանցով:

1. **Թույլատրվում է**
2. Արգելվում է

Պատ.՝ 1

---

133. Ավտոբուսի վարորդը թունելներով երթևեկելիս ի՞նչ լուսային սարքեր պետք է պարտադիր միացնի:

1. Եզրաչափային լույսերը, եթե թունելն ունի արհեստական բավարար լուսավորություն
2. **Լապտերների մոտակա կամ հեռահար լույսերը**
3. Միայն հակամառախուղային լապտերները

Պատ.՝ 2

---

134. Արհեստական բավարար լուսավորություն ունեցող թունելով երթևեկելիս ավտոբուսի վարորդը պարտավո՞ր է միացնել լապտերների մոտակա կամ հեռահար լույսերը:

1. **Պարտավոր է**
2. Պարտավոր չէ
3. Պարտավոր է միայն գիշերային ժամերին

Պատ.՝ 1

---

135. Բնակավայրերում օրվա մութ ժամանակ բավարար արհեստական լուսավորություն ունեցող ճանապարհներով երթևեկելիս, ավտոբուսի վրա ո՞ր լուսային սարքերը պետք էմիացված լինեն:

1. Հեռահար կամ մոտակա լույսերը՝ վարորդի ընտրությամբ
2. Միայն եզրաչափային լույսերը
3. **Միայն մոտակա լույսերը**

Պատ.՝ 3

---

136. Լապտերների հեռահար լույսը պետք է փոխարկվի մոտակայի

1. **բնակավայրում, եթե ճանապարհը լուսավորված է:**
2. բնակավայրերից դուրս հանդիպակաց երթևեկող տրանսպորտային միջոցից 100մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

Պատ.՝ 1

---

137. Օրվա մութ ժամանակ ճանապարհի չլուսավորված հատվածներում կանգառի և կայանման դեպքում ավտոբուսի վրա ո՞ր լուսային սարքերը պետք է պարտադիր միացված լինեն:

1. Լապտերների մոտակա լույսը
2. **Եզրաչափային լույսերը**
3. Միայն սրահի ներքին լուսավորությունը

Պատ.՝ 2

---

138. **Անբավարար տեսանելիության պայմաններում ճանապարհներին կանգառ կամ կայանում կատարելիս ավտոբուսի վրա ո՞ր լուսային սարքերը պետք է պարտադիր միացված լինեն:**

1. **Եզրաչափային լույսերը, իսկ դրանցից բացի թույլատրվում է միացնել նաև լապտերների մոտակա լույսերը և հակամառախուղային լապտերները**
2. Միայն լապտերների հեռահար լույսերը, որպեսզի ավտոբուսը նկատելի լինի մեծ հեռավորությունից

Պատ.՝ 1

---

139. **Օրվա լուսավոր ժամերին ավտոբուսը նշելու նպատակով լապտերների մոտակա լույսը պետք է միացված լինի**

1. միայն այն դեպքում, երբ ավտոբուսը տեխնիկական անսարքության պատճառով քարշակվում է մեկ այլ տրանսպորտային միջոցի կողմից:
2. **երեխաների խմբերի կազմակերպված փոխադրումներ կատարելիս:**
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 2

---

140. **Օրվա լուսավոր ժամերին ավտոբուսը նշելու նպատակով լապտերների մոտակա լույսը պետք է միացված լինի՝**

1. **կազմակերպված տրանսպորտային շարասյունում երթևեկելիս:**
2. միայն միջպետական երթուղիներով երթևեկելիս:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

---

141. **Ո՞ր դեպքում է ավտոբուսի վարորդին թույլատրվում ձայնային ազդանշան տալ բնակավայրում:**

1. Վազանց կատարելու մտադրության մասին մյուս վարորդներին նախազգուշացնելու համար
2. **Երբ դա անհրաժեշտ է ճանապարհատրանսպորտային պատահարը կանխելու համար**
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 2

---

142. **Օրվա լուսավոր ժամերին վազանցի մասին նախազգուշացնելու համար ձայնային ազդանշանի փոխարեն կամ նրա հետ միաժամանակ կարող է տրվել լուսային ազդանշան, որն իրենից ներկայացնում է**

1. լապտերների լույսի բազմակի փոխարկումները մոտակայից հեռահարի:
2. **լապտերների լույսի պարբերաբար միացումն ու անջատումը:**
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 2

---

143. **Օրվա մութ ժամանակ վազանցի մասին նախազգուշացնելու համար ձայնային ազդանշանի փոխարեն (կամ նրա հետ միաժամանակ) կարող է տրվել լուսային ազդանշան, որն իրենից ներկայացնում է**

1. **լապտերների լույսի բազմակի փոխարկումները մոտակայից հեռահարի:**
2. լապտերների լույսի պարբերաբար միացումն ու անջատումը:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

---

144. **Ի՞նչ լուսային ազդանշան պետք է պարտադիր միացված լինի «Երեխաների փոխադրում» ճանաչման նշանով կահավորված ավտոբուսի վրա երեխաների նստեցման և իջեցման ժամանակ:**

1. Ոչ մի լուսային ազդանշան պետք չէ միացնել
2. Աջ կողմի շրջադարձի ցուցիչը
3. **Վթարային լուսային ազդանշանը**

Պատ.՝ 3

---

145. **Ի՞նչ գործողություններ պետք է կատարի տրանսպորտային միջոցի վարորդը՝ «Երեխաների փոխադրում» ճանաչման նշանով և միացված վթարային լուսային ազդանշանով կանգնած ավտոբուսին մոտենալիս, երբ կատարվում է երեխաների նստեցում կամ իջեցում:**

1. Պարտավոր է անմիջապես կանգ առնել և սպասել այնքան ժամանակ, մինչև ավտոբուսը չանջատի վթարային ազդանշանը և չսկսի շարժվել
2. **Պարտավոր է նվազեցնել արագությունը, իսկ անհրաժեշտության դեպքում պետք է կանգ առնի՝ երեխաներին երթևեկելի մասն անարգել անցնել թույլ տալու համար**
3. Թվարկված երկու գործողությունները

Պատ.՝ 2

---

146. **Ի՞նչ նպատակով է կարգավորողն օգտագործում ցուցաձողը՝ այդ թվում կարմիր ազդանշանով կամ լուսաանդրադարձիչ սկավառակով:**

1. **Ազդանշանների լավ տեսանելիության համար**
2. Տրանսպորտային միջոցների կանգառի վայրը կոնկրետ մատնանշելու համար

Պատ.՝ 1

---

147. **Թույլատրվու՞մ է անբավարար տեսանելիության ժամանակ միայն հակամառախուղային լույսերը միացրած երթևեկել:**

1. Այո, եթե դրանք գործարանային են տեղադրված
2. Այո
3. **Ոչ, միաժամանակ պետք է միացված լինեն մոտակա կամ հեռահար լույսերը:**

Պատ.՝ 3

---

148. **Վթարի վայրում երթուղային ավտոբուսի վարորդը պարտավոր է**

1. միայն միացնել վթարային լուսային ազդանշանը:
2. միայն տեղադրել << Վթարային կանգառ>> ճանաչման նշանը:
3. **կատարելու նշված երկու գործողությունները:**

Պատ.՝ 3

---

149. **Կապույտ գույնի առկայծող փարոսիկ և հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոց մոտենալու դեպքում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վարորդները պետք է**

1. շարունակեն երթևեկությունը, քանի որ երթևեկում են սահմանված երթուղով:
2. կանգ առնեն և շարունակեն երթևեկությունը միայն թույլտվություն ստանալուց հետո:
3. **զիջեն ճանապարհը՝ նշված տրանսպորտային միջոցի անխոչընդոտ անցումն ապահովելու համար:**

Պատ.՝ 3

---

150. **Կարմիր գույնի առկայծող փարոսիկ միացրած, կանգնած վիճակում գտնվող տրանսպորտային միջոցին մոտենալիս՝ տվյալ ուղղությամբ երթևեկող ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վարորդները պետք է**

1. զիջեն ճանապարհը նշված տրանսպորտային միջոցի անխոչընդոտ անցումն ապահովելու համար:
2. **կանգ առնեն և շարունակեն երթևեկությունը միայն թույլտվություն ստանալուց հետո:**
3. շարունակեն երթևեկությունը, քանի որ երթևեկում են սահմանված երթուղով:

Պատ.՝ 2

---

151. **Օրվա մութ ժամանակ ճանապարհի լուսավորված հատվածներում սահմանված երթուղով երթևեկեղ ավտոբուսի վրա պետք է միացված լինի՝**

1. **Միայն լապտերների մոտակա լույսը:**
2. Միայն լապտերների հեռահար լույսը:
3. Լապտերների հեռահար կամ մոտակա լույսը:

Պատ.՝ 1

---

152. **Բնակավայրերում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ձայնային ազդանշանները կարող են կիրառվել**

1. Երթևեկության մյուս մասնակիցների նկատմամբ առավելություն ստանալու համար:
2. **Երբ դա անհրաժեշտ է ճանապարհատրանսպորտային պատահարը կանխելու համար:**
3. Վազանց կատարելու մտադրության մասին մյուս վարորդներին նախազգուշացնելու համար:
4. Բոլոր դեպքերում էլ:

Պատ.՝ 2

---

153. **Օրվա լուսավոր ժամերին կազմակերպված տրանսպորտային շարասյունում երթևեկելիս ավտոբուսը նշելու նպատակով պետք է միացված լինի՝**

1. Միայն լապտերների հեռահար լույսը:
2. **Միայն լապտերների մոտակա լույսը:**
3. Եզրաչափային լույսերը:

Պատ.՝ 2

---

154. **Ավտոբուսի վարորդը վազանցի մասին նախազգուշացնելու համար ձայնային ազդանշանի փոխարեն (կամ նրա հետ միաժամանակ) կարո՞ղ է տալ լուսային ազդանշան:**

1. Չի կարող
2. **Կարող է**

Պատ.՝ 2

---

155. **Ավտոբուսի վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի**

1. Այլ տրանսպորտային միջոցների նկատմամբ առավելություն ստանալու նպատակով:
2. Քարշակման դեպքում քարշակող ավտոբուսի վրա:
3. **Այն դեպքում, երբ վտանգի մասին անհրաժեշտ է նախազգուշացնել երթևեկության մյուս մասնակիցներին:**
4. Վերոնշյալ բոլոր դեպքերում:

Պատ.՝ 3

---

156. **Կապույտ կամ կապույտ և կարմիր գույների առկայծող փարոսիկներ միացրած, կանգնած վիճակում գտնվող տրանսպորտային միջոցներին մոտենալիս ավտոբուսի վարորդը պետք է**

1. Կանգ առնի, թույլտվություն ստանալուց հետո միայն շարունակի երթևեկությունը:
2. **Իջեցնի արագությունը, որպեսզի անհրաժեշտության դեպքում կանգ առնի:**

Պատ.՝ 2

---

157. **Կարմիր գույնի առկայծող փարոսիկ միացրած, կանգնած վիճակում գտնվող տրանսպորտային միջոցին տվյալ ուղղությամբ երթևեկող ավտոբուսի վարորդը պարտավոր է**

1. **Կանգ առնել և երթևեկությունը շարունակել միայն թույլտվություն ստանալուց հետո:**
2. Շարունակել երթևեկությունը՝ առանց կանգառ կատարելու:

Պատ.՝ 1

---

158. **Ավտոբուսի վարորդը չպետք է խոչընդոտ ստեղծի երթևեկելի մասը հատող կույր հետիոտներին, որոնք ճանապարհը հատում են**

1. Հետիոտնային անցումներից դուրս:
2. Հետիոտնային անցումներով:
3. **Թվարկած բոլոր դեպքերում:**

Պատ.՝ 3

---

159. **Ավտոբուսի վարորդին արգելվում է անցնել երկաթուղային գծանցը, եթե գծանցի հերթապահը**

1. Կրծքով կամ մեջքով կանգնած է դեպի վարորդը:
2. Ազդանշան է տալիս ցուցածողով, կարմիր լապտերով կամ գլխից վեր բարձրացրած դրոշակով:
3. Կողմ է պարզել ձեռքերը:
4. **Թվարկած բոլոր դեպքերում:**

Պատ.՝ 4

---

160. **Երկաթուղային գծանցին մոտենալիս ավտոբուսի վարորդը պետք է ղեկավարվի**

1. Գծանցի հերթապահի ցուցումներով:
2. Երկաթուղային գծանցներով, երթևեկությունը կարգավորելու համար նախատեսված լուսացույցների, նշանների, գծանշումների պահանջներով և ուղեփակոցի դիրքով:
3. **Թվարկված բոլոր պահանջներով:**

Պատ.՝ 3

---


161. **Օրվա լուսավոր ժամերին հատուկ առանձնացված գոտիով, հիմնական հոսքին հանդիպակաց երթևեկող ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա պետք է միացված լինի**

1. Լապտերների հեռահար լույսերը:
2. **Լապտերների մոտակա լույսերը:**
3. Եզրաչափային լույսերը:

Պատ.՝ 2

---

162. Այս նշանի առկայության դեպքում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա պետք է օրվա լուսավոր ժամերին միացված լինեն




1. Լապտերների հեռահար կամ մոտակա լույսերը:
2. Լապտերների մոտակա լույսերը:
3. Եզրաչափային և հակամառախուղային լապտերները:
4. Վթարային լուսային ազդանշանները:
5. **Նշվածներից ոչ մեկը:**

Պատ.՝ 5

---

163. Այս նշանի առկայության դեպքում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վարորդները օրվա լուսավոր ժամերին պարտավոր են միացնել



1. Լապտերների հեռահար կամ մոտակա լույսերը:
2. **Լապտերների մոտակա լույսերը:**
3. Եզրաչափային լույսերը:
4. Վթարային լուսային ազդանշանները:
5. Բոլոր թվարկված լուսային սարքերը:

Պատ.՝ 2

---

164. Օրվա մութ ժամանակ ճանապարհի չլուսավորված հատվածներում կանգառի կամ կայանման դեպքում ավտոբուսների վրա պետք է միացված լինեն

1. **Եզրաչափային լույսերը:**
2. Մոտակա լույսերը:
3. Հակամառախուղային լապտերները:

Պատ.՝ 1

---

165. **Ավտոբուսի հեռահար լույսը պետք է փոխարկվի մոտակայի**

1. Ցանկացած դեպքում հանդիպակաց երթևեկող տրանսպորտային միջոցների վարորդներին շլացնելու հնարավորությունը բացառելու համար:
2. Ցանկացած դեպքում համընթաց երթևեկող տրանսպորտային միջոցների վարորդներին շլացնելու հնարավորությունը բացառելու համար:
3. Հանդիպակաց երթևեկող տրանսպորտային միջոցներից 150 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:
4. **Թվարկված բոլոր դեպքերում:**

Պատ.՝ 4

---

166. **Ավտոբուսի վարորդը պարտավոր է անջատել ձախ շրջադարձի ցուցիչը**



1. **Ձախ գոտի վերադասավորելուց հետո:**
2. Բեռնատարին վազանցելուց հետո:
3. Աջ գոտի վերադառնալուց հետո:

Պատ.՝ 1

---

167. **Արտաքին ի՞նչ լուսասարքեր պետք է միացված լինեն «Երեխաների փոխադրում» ճանաչման նշանով նշված տրանսպորտային միջոցի վրա, երեխաների նստեցման և իջեցման ժամանակ:**

1. Եզրաչափային լույսերը
2. Լապտերների մոտակա լույսը կամ հակամառախուղային լապտերները
3. **Վթարային ազդանշանը**

Պատ.՝ 3
